



# Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

## Կարճ գրություն 6

Հունվար 2011

### Պետական գնումներ

# Հայտարարումը

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ինչու՞ է հայտարարումը կարևոր:
- Որտե՞ղ և ե՞րբ պետք է հայտարարություն հրապարակել:
- Շուկան տեղեկացված պահելը
- Հայտարարության հրապարակումը
- Էլեկտրոնային գնումներ



[www.sigmaweb.org](http://www.sigmaweb.org)

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

## Ինչու՞ է հայտարարումը կարևոր:

Հայտարարումը պետական գնումների հիմնաքարն է: Ամբողջական և բաց հայտարարումը.

- **օժանդակում է մրցակցությանը** – տեղեկացնելով հնարավորինս շատ հնարավոր մասնակիցների պայմանագիր կնքելու հնարավորության մասին և հետևաբար, հնարավորություն տալով նրանց մրցակցել, ինչը հանգեցնում է պետական պատվիրատուի համար գնի և որակի լավագույն հարաբերակցությամբ արդյունքի
- **զարգացնում է շուկան** – հնարավոր մասնակիցներին ցույց տալով գործարար ոլորտում առկա հնարավորությունները, ինչը խրախուսում է շուկայի զարգացումը նոր և ավելի բազմազան մասնակիցների հայտնվելու և տեղական, մարզային, ազգային և միջազգային մակարդակներում մասնակիցների ավելի մեծ քանակի միջոցով:
- **օգնում է կաշառակերության դեմ պայքարում** – մեծացնելով թափանցիկությունը և ապահովելով, որ մասնակիցները, հանրությունը, մամուլը և այլ շահագրգիռ կողմերը տեղյակ լինեն պայմանագրի կնքման հնարավորության մասին և հնարավորություն ունենան ավելին իմանալու առկա հնարավորությունների և այն մասին, թե ում են շնորհվել պայմանագրերը:

## Որտե՞ղ պետք է հրապարակել հայտարարությունը:

Որոշակի տեսակի և արժեքի պայմանագրերի մասին հայտարարությունները, ինչը նշանակում է, որ դրանք կարգավորվում են Հրահանգով, պետք է հրապարակվեն ԵՄ Պաշտոնական Տեղեկագրի Լրացման մեջ: Հայտարարությունները հրապարակվում են անվճար: ԵՄՊՏ Լրացման անվճար առցանց տարբերակը, որը կոչվում է “ԷՄՕ” (Էլեկտրոնային Մրցույթների Օրաթերթ) հասանելի է <http://ted.europa.eu> համացանցային կայքում:

ԵՄ շատ Անդամ երկրներ պահանջում են նաև ազգային մակարդակում այն պայմանագրերի մասին հայտարարությունների հրապարակում, որոնք ենթակա չեն հրապարակման ԵՄՊՏ-ում:

**Այլ հրապարակումներ.** Պայմանագրի մասին հայտարարությունները կարող են հրապարակվել նաև այլ միջազգային, ազգային կամ տեղական հրապարակումներում: Եթե կիրառվում է լրացուցիչ հայտարարությունը, Հրահանգը նախատեսում է, որ այն չպետք է հրապարակվի, մինչև ԵՄՊՏ-ում հրապարակվելը և որ լրացուցիչ հայտարարությունը չպետք է պարունակի այնպիսի տեղեկատվություն, որն ընդգրկված չէ ԵՄՊՏ-ում հրապարակված հայտարարության մեջ:

## Ե՞րբ պետք է հրապարակել հայտարարություն:

Կա երեք հիմնական դեպք, երբ պետք է հրապարակվի հայտարարություն.

- Մինչև գնումների ընթացակարգի սկիզբը - կամընտրական հայտարարություն՝ հրապարակելով նախնական տեղեկատվության հայտարարությունը՝ շուկային տեղեկացնելով ապագա պայմանագրերի մասին:
- Որոշակի պայմանագրերին հատուկ գնումների ընթացակարգի սկզբում - տնտեսվարող սուբյեկտներին հրավիրելու մասնակցել գնումների ընթացակարգին՝ հրապարակելով պայմանագրի հայտարարությունը
- Որոշակի պայմանագրերին հատուկ գնումների ընթացակարգի ավարտին - տեղեկացնելու մասնակիցներին և այլոց, որ գնումների գործընթացն ավարտվել է՝ հրապարակելով Պայմանագրի շնորհման հայտարարություն կամ նախնական կամավոր հայտարարությունը:

**Մինչև գնումների գործընթացի սկիզբը նախնական տեղեկատվության մասին հայտարարությունը հրապարակելը.** Հրահանգը թույլատրում է, բայց չի պարտադրում պետական պատվիրատուին նախազգուշացնել շուկային ապագա պայմանագրերի մասին՝ նախնական տեղեկատվության մասին հայտարարություն հրապարակելու միջոցով:

Նախապես հայտարարություն հրապարակելը օգտակար է և՛ պետական պատվիրատուի, և՛ հնարավոր մասնակիցների համար:

- Մինչև հայտարարություն տալը պետական պատվիրատուն պետք է լուրջ մտածի իր պահանջների մասին, և հետևաբար, նախնական տեղեկատվության հայտարարությունը կարող է օժանդակել, որպեսզի նախնական ծրագրմանը և բյուջետավորմանը լուրջ վերաբերեն:
- Տնտեսվարող սուբյեկտները, որոնք նախապես տեղեկացվել էին ապագա պայմանագրերի մասին, կարող են համապատասխան ծրագրեր կազմել: Այս ծրագրումն օժանդակում է մրցակցության բարձր մակարդակին և պետական պատվիրատուի համար համեմատաբար լավ արդյունքներ ունենալուն՝ գնի և որակի հարաբերակցության առումով:
- Եթե կիրառվում է նախնական տեղեկատվության հայտարարության հրապարակումը, ապա որոշակի հանգամանքներում մրցույթի անցկացման սահմանված ժամկետները կարող են նվազեցվել:

Գոյություն ունի նախնական տեղեկատվության հայտարարության հրապարակման ստանդարտ ձևաչափ, որը հրապարակվել է ԵՄ Հանձնաժողովի կողմից իր համացանցային էջում [www.simap.europa.eu](http://www.simap.europa.eu): Ձևաչափը նույնն է բոլոր տեսակի պայմանագրերի համար:

**Մենք ցանկանում ենք շուկան տեղեկացված պահել ապագա հնարավորությունների մասին: Կա՞ արդյոք այլընտրանք նախնական տեղեկատվության հայտարարությանը:**

Այո, պետական պատվիրատուն կարող է ստեղծել իր սեփական, համացանցի վրա հիմնված “գնորդի բնութագիրը”: Գնորդի բնութագիրը ներառում է պետական պատվիրատուի մասին ընդհանուր տեղեկատվություն՝ ընթացիկ մրցույթի հրավերի, նախատեսված գնումների, կնքված պայմանագրերի և անվավեր ճանաչված ընթացակարգերի մասին տեղեկատվության հետ միասին:

Պետական պատվիրատուն կարող է օգտագործել նաև գնորդի իր բնութագիրը՝ նախնական տեղեկատվության հայտարարություն հրապարակելու համար: Եթե պետական պատվիրատուն օգտագործում է գնորդի իր բնութագիրը՝ նախնական տեղեկատվության հայտարարություն հրապարակելու համար, այն կարիք չունի ԵՄՊՏ-ում հրապարակել նախնական տեղեկատվության մասին հայտարարությունը՝ պայմանով, որ այն պետք է համապատասխանի որոշակի պայմանների:

**Որոշակի պայմանագրերին հատուկ գործընթացի սկզբում հայտարարություն հրապարակելը՝ Պայմանագրի հայտարարությունն օգտագործելու միջոցով.**

Պայմանագրի հայտարարությունը գնումների գործընթացի չափազանց կարևոր մասն է: Այն նշանավորում է գնումների գործընթացի սկիզբը հատուկ պայմանագրերի համար և տեղեկացնում է հնարավոր մասնակիցներին՝ գնումների գործընթացին մասնակցելու հնարավորության մասին:

Պետք է օգտագործվեն ստանդարտ ձևաչափի հայտարարությունները: Մրանք հրապարակվել են ԵՄ Հանձնաժողովի կողմից իր համացանցային էջում [www.simap.europa.eu](http://www.simap.europa.eu): Գնումների գործընթացներում մեծամասամբ կիրառվում է ստանդարտ ձևաչափով Պայմանագրի հայտարարությունը, սակայն գնումների տարբեր տեսակների համար կիրառվում են հայտարարությունների տարբեր ձևաչափեր: Օրինակ, գոյություն ունեն Պայմանագրի հայտարարության հատուկ ձևաչափեր, որոնք պետք է օգտագործվեն նախագծային, բնակարանաաշինության և հանրային աշխատանքների կոնցեսիաների պայմանագրերի համար:

Հնարավորինս մեծ մրցակցություն ապահովելու և թափանցիկության հիմնական պահանջներին համապատասխանելու համար Պայմանագրի հայտարարությունը պետք է կազմվի այնպես, որ հստակորեն նկարագրի պայմանագրի բնույթը, գործունեության ոլորտը, գնահատված արժեքը, և թե ինչպես կարող են տնտեսվարող սուբյեկտները մասնակցել գործընթացին: Պայմանագրի հայտարարությունը պետք է նաև ամբողջապես և ճշգրիտ կերպով լրացվի: Պայմանագրի հայտարարության ոչ հստակ, ոչ ամբողջական և ոչ համապատասխան լինելը կարող է հանգեցնել մրցակցության ցածր մակարդակի, ոչ ճիշտ հայտեր ներկայացվելու կամ թերություններ ունեցող գնումների գործընթացի կազմակերպման, որը կարող է հանգեցնել նոր գնման գործընթացի կազմակերպման:

**Ի՞նչ կարող ենք անել, եթե Պայմանագրի հայտարարությունը ճիշտ չէ, կամ եթե կարիք կա փոփոխություններ կատարել Պայմանագրի հայտարարության մեջ:**

Գոյություն ունի Լրացուցիչ տեղեկատվության, Անավարտ ընթացակարգի մասին տեղեկատվության կամ Փոփոխությունների մասին Հայտարարությունների ստանդարտ ձև: Հայտարարության այս ստանդարտ ձևը առկա է Հանձնաժողովի Si-map համացանցային էջում (ձև համար 14) և կարող է օգտագործվել: Անավարտ ընթացակարգի համար, երբ ընթացակարգը դադարեցվել է, հայտարարվել է չկյացած կամ պայմանագիրը չի շնորհվել, ինչպես նաև ուղղման և լրացուցիչ տեղեկատվության համար:

**Որոշակի պայմանագրերին հատուկ գնումների գործընթացի ավարտին տրվող հայտարարություն` օգտագործելով պայմանագրի շնորհման հայտարարությունը.** Պետական պատվիրատուն պետք է հայտարարի որոշակի պայմանագրերին հատուկ գնումների գործընթացի ավարտի մասին` օգտագործելով Պայմանագրի Շնորհման հայտարարությունը, որը պետք է հրապարակվի պայմանագրի շնորհումից հետո 48 օրվա ընթացքում:

Վերջնական հայտարարության հրապարակումը կարևոր է, որովհետև այն ապահովում է գործընթացի թափանցիկությունը, քանի որ մասնակիցները և այլոք տեղեկանում են, որ գնումների գործընթացն ավարտված է և թե ինչի հիման վրա է այն ավարտվել: Եվրոպական Հանձնաժողովը կիրառում է այս տեղեկատվությունը նաև գնումների ոլորտում գործունեության մակարդակի և բնույթի վերաբերյալ վիճակագրական տվյալների պատրաստման և գնումների գործընթացների դիտանցման համար:

Պայմանագրի Շնորհման հայտարարություն հրապարակելու պարտականությունը կիրառվում է բոլոր այն պայմանագրերի նկատմամբ, երբ Պայմանագրի հայտարարությունը հրապարակվել է, ինչպես նաև մի շարք այլ պայմանագրերի նկատմամբ, երբ նման հայտարարություն չի հրապարակվել:

**Կա՞ն արդյոք կանոններ, թե երբ պետք է հրապարակվեն հայտարարություններ:** Այո, բոլոր հայտարարությունները, որոնք ուղարկվել են էլեկտրոնային եղանակով և ճիշտ ձևաչափով, պետք է հրապարակվեն ուղարկելուց հետո հինգօրյա ժամկետում: Այլ եղանակներով ուղարկված հայտարարությունները պետք է հրապարակվեն տասներկու օրվա ընթացքում:

## Էլեկտրոնային գնումներ

**Կարո՞ղ ենք արդյոք լրացնել և ուղարկել պայմանագրի հայտարարություններն էլեկտրոնային եղանակով:** Այո, և՛ Հրահանգը, և՛ Եվրոպական Հանձնաժողովը խրախուսում են ձեզ այդպես վարվել: Գոյություն ունի անվճար էլեկտրոնային համակարգ՝ հասանելի անմիջապես Եվրոպական Հանձնաժողովից [www.simap.europa.eu](http://www.simap.europa.eu):

Էլեկտրոնային գնումները խրախուսելու նպատակով գնումների գործընթացի անցկացման համար սահմանված նվազագույն ժակետները նվազեցվել են և գոյություն չունի բառերի առավելագույն քանակ, եթե պայմանագրի հայտարարությունները լրացված և ուղարկված են ԵՄՊՏ՝ օգտագործելով անցանց համակարգը: Հայտարարությունների ձևաչափը և էլեկտրոնային եղանակով

### **Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններ**

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները պետք է հրապարակեն որոշակի տեսակ և արժեք ունեցող պայմանագրերի մասին հայտարարություններ, բայց նրանք ավելի ճկուն են հայտարարության մեթոդի ընտրության առումով: Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները կարող են նաև ունենալ իրենց հասանելի գնումների լրացուցիչ մեթոդները:

**Հայտարարության ընտրությունը.** Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ունեն ազատ ընտրության հնարավորություն մրցակցային ընթացակարգերի երեք հիմնական ձևերի միջև. բաց ընթացակարգ, սահմանափակ ընթացակարգ և հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ունեն նաև ճկունություն այն առումով, թե ինչպես են նրանք հայտարարություն հրապարակելու, որը օրենսդրության մեջ անվանվում է “մրցույթի հայտարարում”: Սահմանափակ ընթացակարգ կամ հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ կազմակերպելիս Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները կարող են հրապարակել

- պայմանագրի հայտարարություն կամ
- տարեկան “ցուցադրական հայտարարություն” կամ
- նախաորակավորման համակարգի անկազման մասին հայտարարություն

Բաց ընթացակարգ կազմակերպելիս Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ընտրություն չունեն և պետք է հրապարակեն Պայմանագրի հայտարարությունը:

Օրենքով սահմանված ժամանակացույցերը կիրառվում են և յուրաքանչյուր դեպքում պետք է օգտագործվի պայմանագրի հայտարարության ստանդարտ ձևաչափը:

**Տեղական հայտարարություններ.** Հայտարարությունները կարող են հրապարակվել նաև ազգային մակարդակով, որի դեպքում նրանք չպետք է պարունակեն Հանձնաժողովին ուղարկված հայտարարության մեջ պարունակվող տեղեկատվությունից բացի այլ տեղեկատվություն և դրանք չպետք է տեղական մակարդակով հրապարակվեն մինչև հայտարարարությունը Հանձնաժողովին ուղարկվելը:

**Նախաորակավորման համակարգեր.** Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններին թույլատրված է ստեղծել և օգտագործել

նախաորակավորման համակարգեր: Նախաորակավորման համակարգը համակարգ է, որտեղ կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպության հետ պայմանագիր կնքելու մեջ շահագրգռված տնտեսվարող սուբյեկտները դիմում են՝ որպես հավանական մատակարար գրանցվելու համար: Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունն այնուհետև համակարգում գրանցում է այս տնտեսվարող սուբյեկտներից մի քանիսին կամ բոլորին: Գրանցված մասնակիցները կազմում են մեկ միասնություն, որից կոմունալ ծառայություն մատուցող կազմակերպությունը կարող է ընտրել այն մասնակիցներին, որոնք հրավիրվում են հայտ ներկայացնելու կամ պայմանագրի վերաբերյալ բանակցելու:

Նախաորակավորման համակարգը ստեղծելիս կոմունալ ծառայություն մատուցող կազմակերպությունը հրաարակում է “ցուցադրական հայտարարությունը”: Ցուցադրական հայտարարությունը կարող է հրապարակվել կամ ԵՄՊՏ-ում, կամ կոմունալ ծառայություն մատուցող կազմակերպության սեփական, գնորդի բնութագրում (ԵՄՊՏ ուղարկված հրապարակման հայտարարության հետ մեկտեղ): Երեք տարի կամ ավելի քիչ ժամկետով նախաորակավորման համակարգերի համար “ցուցադրական հայտարարությունը” հրապարակվում է միայն, երբ նախաորակավորման համակարգը ստեղծվել է: Երեք տարուց ավելի տևող նախաորակավորման համակարգերի համար պահանջվում է տարեկան “ցուցադրական հայտարարության” հրապարակում:

**Շրջանակային համաձայնագրեր.** Կոմունալ ծառայություն մատուցող կազմակերպությունները կարող են ստեղծել շրջանակային համաձայնագրեր՝ օգտագործելով Պայմանագրի հայտարարության ստանդարտ ձևը:

**Գնումների դինամիկ համակարգեր.** Կոմունալ ծառայություն մատուցող կազմակերպություններին թույլատրված է ստեղծել նաև գնումների դինամիկ համակարգեր և մրցույթների հայտարարումն այս համակարգերի ներքո ներառում է Պայմանագրի Հայտարարության պարզեցված ձևի օգտագործումը:

**Պայմանագրի շնորհման հայտարարություններ.** Կոմունալ ծառայություն մատուցող կազմակերպություններից պահանջվում է Պայմանագրի Շնորհման հայտարարությունը ստանդարտ ձևաչափով ԵՄՊՏ Գրասենյակ ներկայացնել՝ պայմանագրի կամ շրջանակային համաձայնագրի շնորհումից հետո երկու ամսվա ընթացքում: Գնումների դինամիկ համակարգերի համար Պայմանագրի Շնորհման հայտարարությունները կարող են խմբավորվել և ուղարկվել եռամսյակը մեկ, համապատասխան եռամսյակի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում:

Հետագա ընթերցանություն.

[SIGMA Public Procurement Training Manual](#)

[www.simap.europa.eu](http://www.simap.europa.eu)